Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի
01 նոյեմբերի 2018 թվականի թիվ 149 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին մրցույթի հայտարարության տեքստ

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնողանդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթըկկայանա 2018 թվականի նոյեմբերի 22-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Վայքի համայնքապետարանի աշխատակազմ հետևյալ հասցեով ք. Վայք, Շահումյան 18, հեռ. 098772291:

Դիմումների տրման վերջնաժամկետնէ՝ 17/11/2018թ.:

Դիմող քաղաքացիները Վայքի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

ա/դիմում համայնքապետարանի աշխատակազմի անունով /դիմումի ձևը ազատ է/,

բ/խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/մեկ լուսանկար՝ 3Х4 սմ չափի,

դ/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: